ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Հունիսի 23-ին, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վանաձոր (Գուգարաց թեմ)՝ կատարելու թեմի առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքը, որի հողօրհնեքի արարողությունը տեղի էր ունեցել անցած տարի, մայիսի 25-ին: Ամերիկահայ տեր և տիկին Սարգիս և Հռութ Բեղեյանների բարերարությամբ կառուցվող առաջնորդանիստ այս շքեղ եկեղեցին կրելու է Ս. Գրիգոր Նարեկացու անունը՝ ի նշանավորումն այս տարի ազգովի տոնախմբվող՝ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի 1000-ամյակի:

Մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և Հայրապետական շքախմբին միացան Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը և մարզային ու քաղաքային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

Մինչ հիմնարկեքի արարողությունը Նորին Սրբությանը և ուղեկից եկեղեցականներին ու ազգային բարերարներին բարիգալստյան խոսքով դիմեցին թեմական առաջնորդ Սրբազան Հայրը և Լոռու մարզպետը՝ կարևորելով առաջնորդանիստ եկեղեցու կառուցման անհրաժեշտությունը և դերը Վանաձորի բնակչության հոգևոր արթնության համար:

Հիմնարկեքի արարողության ընթացքում, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը՝ կոչվելով Տիրոջ առաքյալների, 4 ավետարանիչների և Ս. Գրիգոր Լուսավորչի անուններով: Ապա դրանք տեղադրվեցին նորակառույց եկեղեցու հիմքում:

«Փառք և գոհություն ենք բարձրացնում, որ մեր կյանքի դժվարին ժամանակներում Աստված ողորմության իր լայն դռները բացել է մեր ժողովրդի առջև և պարգևում է շնորհը՝ եկեղեցի կառուցելու, աղոթքի մեր տները շենացնելու և մեր զավակներին համախմբելու մեր նվիրական հայրերի սրբազան ժառանգության և սուրբ հավատքի շուրջ:

...Տիրոջ ողորմության հայցումով այս եկեղեցին կոչում ենք Ս. Գրիգոր Նարեկացու անունով, որպեսզի մեր սրբի բարեխոսությունը միշտ մեր ժողովրդի համար բարձրանա առ Աստված, որպեսզի նրա աղոթքները գան մաքրելու մեր հոգին, սրբելու մեր կյանքից ամեն արատավոր երևույթ, աղոթքները գան՝ մեզ դառնալու բժշկություն, զորակցություն և ճանապարհ դեպի Աստված: ...Վստահ ենք, որ Ս. Գրիգորի անունով այս եկեղեցին, որ պիտի վեր հառնի մեր բարերարների ազնիվ հոգու և առատաձեռնության շնորհիվ ու հայրենյաց մեր զավակների քրտնաջան աշխատանքով, պիտի գա հրաշագործելու վանաձորցի մեր հայորդիների կյանքում»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հիմնարկեքի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց նաև թեմապատկան «Ծիծեռնակ» մանկական ճամբար:

- Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առա-

ՇՐՋՄԱ ԸՆԹԱՑՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱՄԱՐՏԻ 19 ԱՄՍՕՕ ՁԱՐԳԱՄԱՐՏՈՒՄԻ ԵՎ ԱՄՍՕՕ ՁԱՐԳԱՄԱՐՏՈՒՄԻ ԴԱՄԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ՄՈՍԿՎԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄԱՐ ՀԱՅՈՑՕ ԿԱՌԱՎԱՐՈՒԿՐ ՎՍՏԱՀԱԿԱ ՀՍՏ Հ ՇՐՋԱԿԱՅՍԵՌ ՈՒՆԿԱՊԱՐՍ Ե ՈՒՍՈՒԼԱՐ
ԳԱՍՊԱՐՈՒՆԻ ՓՈՓՈՐԱՍԱՍՍԵՌ ԻԳՑԱՍ ԿՏՎԱԳԱՐՈՒՄ ՎՍՏԱՀԱԿԱ ՇՐԿՍԵՓԱՍՍԱՐՍ ՀԱԿՍՍ

քել եպս. Քարամյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, Մայր Աթոռի միաբաններ, ազգային բարերարներ տեր և տիկին Սարգիս և Հռութ Բեղնյանները, տեր և տիկ. Գառնիկ և Անի Ցակուբյանները, ԱՄՆ հայոց Արևմտյան, Վիրահայոց և Կանադայի հայոց թեմերի թեմական խորհուրդների ատենապետերը և այլ թեմականներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ